

Hentchak:Organe Central
DU PARTI

HENTCHAKISTE.

Journal Arménien
mensuel

XVIII Année

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱՎԿՑՈՒԹԵԱՆ
ԿՈՏՈՐԾԵՐ
ԵԿ
ՑԱՐԻՉՈՒ

Յարիզմի բաքոսական օրգիան, ուր գինու տեղ հոսում է մարդկային արիւն, թնդում է Առուսաստանի մի ծալրից մինչև միւսը։ Կոտորածներ — հազարներով՝ հայ, հազարներով՝ լեհ, հազարներով՝ հրեայ, և զա միայն մէկ-երկու շաբաթւան մէջ, իրեւ հաշւեցուցակ ցարիզմի արիւնամօլ հարբեցողութեան։ Եստեղ կայ երկու բացատրութիւն։ մէկը՝ իրականը և ուրեմն ձշմարիտը. միւսը՝ ցարիզմի ինքնարդարացման մեթօդը, որ հակառակ է իրականին և ուրեմն ձըշմարտութեան։ Փաստերը, գոկումէնտները և դէպքերի իրական ընթացքն անհերքելի ու վճռական կերպով ապացուցանում են, որ և այդ սարսափելի կոտորածները հէնց ցարիզմի ոճիրներն են, հէնց նրա նախագիծներն են, որ գործադրում են հէնց նրա հրամանով և աջակցութեամբ ֆանատիկոս ու կոյր մահմեդական ամբոխի և կամ զօրքերի ու կրօնամօնների ձեռքով։ Բայց ցարի բազմագունի ծառաները, արդումներ մամուլից և կամ բհւրօկրատական-զինուրական խաւար գետնափորերից, ամեն կերպ ձիգ են թափում հերքել ցարիզմի նախաձեռնութիւնն ու մեղսակցութիւնն այդ զարհուրելի մարդկային հէկասօմքների ոճրում։ Որքան էլ նենդամիտ ստութեան հեւսւածք լինի ցարիզմի ինքնարդարացման այդ մեթօդը, որի դէմ աղաղակում են բիւրաւորների թափւած արիւնը և ամբողջ բազաբակիրթ մարդկութեան զարացած խիզը, այնուամենայիւ սարական հէնց այդ մեթօդն ինքը մերկացնում է ամենքի աչքին ցարիզմի կատարեալ սնանկութիւնը։ Եւ յիրաւի, եթէ նա չէ այդ կոտորածների հեղինակը, ապա ուրեմն ո՞րքան արժանի է նա կրելու աէրութիւն անուն, քանի որ իրան անզօր է գտնում զսպելու վայրենիների ոճրային յարձակումները իր երկրում ապրող մէկ անպաշտապան ժողովրդի

վայ։ Եթէ նա չէ այդ կոտորածների հեղինակը, ապա ուրեմն ինչպէս անւանել նրան տէրութիւն, եթէ նա երան անզօր է գտնում առաջնակութիւն առնելու թիւրքիայի քիւրդերի խուժման սահմանից այս կողմէ կոտորածներ անելու յատուկ դիտաւորութեամբ և պատրաստութիւններով։ Խընդիրը տարգ է. կամ ցարի կառավարութիւնն ինքն է կոտորածների հեղինակը և մահմեդականները և ուրիշներ միայն զինք են նրա ձեռքին, — և այդ դէպքում, ուրեմն, ինքը ցարիզմն է բուն ոճրագործը. և կամ ցարի կառավարութիւնն այլ ևս այնքան անզօր է, որ անկարող է հանդիսանում պաշտպանելու եր սահմանները քրդերի յարձակութեամբ և վերջ գնելու այս արիւնչեղութեան, որ Բագրէց յետոյ այսօր սպառնում է խուռան յորձանքով հեղեղել ամբողջ Առվիկասը։ Եւ այս երկրորդ դէպքում բացայաց և անհերքելի է ցարիզմի կատարեալ անկումն իրեւ տէրութիւն։

Երբ ննդիրը, նայելով այդ երկու տեսակէտից էլ, թէ դեր, թէ դէմ, որոշում և գարձեալ, երկու կողմից էլ, զորուում է կարձամիտ ու նեղսիրտ Ահկօլայի կառավարութեան գլխին և այդ բէժիմի դարեւոր յանցանքների ու ոճիրների անշշուելի ծանրութեան վրայ բարդւում է նորանոր բեռովով, — այդտեղ այլ ևս ո՛չ մի, ամենանչին խակ, մեղմացուցիչ պարագայ չէ ընկնում յօգուտ ցարիզմի. այդտեղ այլ ևս աշաւոր արդարութեամբ անդառնալի կերպով դատապարտութեան է ենթարկուում ինքը ցարիզմն իր տէրունական ամբողջ սնանկ սիստէմով։ այդտեղ էլ, վերջապէս, ըմբոստութիւնը միանդամից ընդ միշտ հաստատուում է իրեւ սրբագան իրաւունք Ուուսատանի բոլոր ժողովրդների համար, որոնց մարդկային ամենամեծ պարտականութիւնն է այլ ևս օր առաջ ապստամբել, միահամուռ և ընդհանուր ոյժերով, ցարիզմի դէմ և նրա տեղը հաստատել ժողովրդային ինքնատիրութեան, ուամկավարութեան բէժիմը։ Ուուսատանի սօցիալ-դէմօկրատիան և նրա հետ միաժամանակ Հնչակեան Առվիկասեան կազմակերպութիւնները, որ փաստօրէն անցել են արդէն սօցիալ-դէմօկրատական հողի վրայ, պէտք

չէ կորցնեն ո՞չ օր, ո՞չ ժամ՝ օդուելու ժողովը ներկայ զայրացած ու ըմբոստ արամալը բութիւնից և կազմակերպելու նրան մի կողմից ինքնապաշտպանութեան համար ընդգէմ վայրենիների յարձակման և միւս կողմից ուղղելով նրա յեղափոխական եռանդը, զայրոյթն ու զօրութիւնն ընդգէմ ցարիզմի՝ մի բացարձակ, յանդուգն և անխնայ կռւով։ Ենմիջական նպատակ ունենալով Ուամկավարութեան յաղթանակը և ապրատամբելով այդ անմիջական նպատակի, սրա տըրամաբանական ծաւալի ամբողջ ընդարձակութեամբ, շուտափոյթ գործադրութեան համար, Ուուսաստանի ամբողջ Ոօցիալ-գէմօկրատիան, որից այսօր այլ ևս չենք զատում Հնչակեան կազմակերպութիւնները, պէտք է ընտրեն իրանց իրբեկ կռւի նշանաբան։ — Համառուսական Ուամկառական վարութիւնը կազմական անդամութեան միջոցով, տապալում ցարիզմի և հաստատումն Հանրապետութեան։ Եյդ նշանաբանի նորագոյն, ներկայ հանգամանքներով թելադրւած, ոգին առանձնապէս վեր ենք հանում, առաջ բերելով ու շեշտելով մասնաւորապէս Յեղափոխութեան վրայ՝ իրբեկ միջոցի, հէնց այն մոքով, որ այդ պիսի ռամկավարական, Օրէնսդիր Ճռողովի հրաւէր երբէք չէ կարելի սպասել ցարիզմից, քանի որ նրա համար դա կը լինէր համանիշ ինքնասպանութեան։ Յարիզը երբէք չի հրաւիրել Ուամկառական, Օրէնսդիր Ճռողովի որպէս զի ինքնասպան չը լինի։ Բայց միւս կողմից էլ Ուուսաստանի բոլոր ժողովսդները, որոնց շահերի ու զարգացման բռն ու ճշմարիս արտայայտիչն է Ոօցիալ-գէմօկրատիան, առանց ցարիզմը սպանելու չեն կարող սնւել իրականացման երազներով այն ռամկավարական, անհրաժեշտ պայմանը չետեւաբար, նրանք պէտք է, առանց վարանման վճռապէս ու միանգամից ընդ միշտ, կանգնեն Յեղափոխութեան այնպիսի գիրքում, որաեղից նըրանց գնդակահարութը կաջադէ սպանել ցարիզմին և արլպիսով բանալ գարագլուխը Ուամկավարութեան։

Եւ ահա ինչո՞ւ այն պատգամաւորութիւնը,
որ Ոռուսաստանի զէմստվօների և քաղաքապե-
տութիւնների կողմից պաշտօնապէս ընդունեց ցա-
րը վերջերս, յայտնւեցաւ, չը նայած իր լեզուի
խստութեան ընդդէմ ներկայ լէժիմի, մի ողոր-
մելի դերակատար ողորմելի կօմէզիայում։ Շիշտ
է, այդ պատգամաւորութիւնն արտայայտիչը չէր

Հասկանալով՝ այդ խօսքն իր բուն իմաստով՝
Որուսաստանի ժողովրդից Բայց և հէնց այդ
հանգամանքն էլ նոր ապացոյց է, որ այդ ժո-
ղովուրդն իր ներկայ ռամկավարական կուռուց
խսկապէս ո՛չ մի գործ էլ չունի քաղցրական
լիրէրալ պատգամաւորութիւնների և աղերսազը-
րերի հետ և ոչ էլ նրանց գործունէութեան
ոչ յեղափոխական և այլ հակա-յեղափոխական
մեթօդների հետ:

Ճողովդները Որուսաստանում պէտք է ո՛չ
թէ ինդրեն ցարիզմից զիջանել և հրաւիրել Օ-
րէնսդիլ Ճողով՝, այլ պէտք է պահանջեն:
Նրանք պէտք է ո՛չ թէ սպասեն, որ ցարիզմը
փորձէ բաժանել իր տէրունական իրաւունքը ժո-
ղովրդի հետ, այլ պէտք է ձեռք բերեն
այդ իրաւունքը և ամբողջապէս ռամ-
կավարական պայմաններում։ Կը անը պէտք է,
վերջապէս, միանգամից ընդ միշտ նկատեն ցա-
րիզմն իբրև իրանց ոխրեիմ թշնամի, որի հետ
պէտք է ո՛չ թէ զինագագար անել և բանակցու-
թեան մէջ մանել, այլ որին պէտք է հարւա-
ծել ու տապալել իբրև կատաղած գաղանի նրա
աւերակների վրայ կառուցանելու համար նոր հա-
սարակական շէնքը։

Դա է այժմ զբութիւնը Ոռուսաստանում
և ժողովրդի զիրքը դէպի ցարիզմը։ Դա բա-
ցարձակ կոխւ է իրարու դէմ կանգնած երկու
անհաշտ թշնամիի մէջ։ Եւ կոտորածները, որ
այսօր սգով են պատել հայերին, լիհերին, հը-
րեաներին և ուռւաներին, լինի մահմեցականի ձեռ-
քով և կամ ցարիզմի զօրքերի միջոցով, չեն
սա անալ վերջ—այդ լաւ պէտք է
ըմբռնել — մինչև որ ընդհանուր
Յեղափոխութեամբ աշխատաւոր
ժողովը զները չապստամբեն և յաղ-
թանակը տանելով՝ չը հաստատեն
իրանց ժողովը դային ինքնիշխա-
նութիւնը։

ՆԱԽԻՋԵՒԱՆ, 20 Մայիս, 1905

“Աախորդ նամակովս յութնելով ձեզ այստեղ կա-
տարւած երկու սպանութեանց առթիւ թուրքերի լար-
ւած գրութիւնը՝ գուշակել էի մի աղետալի հետևանք։
Գուշակութիւնս իրականացաւ, և ահա ո դարկում եմ
ձեզ միւչեւ այսօր կատարւած դէպքերի համառօտ նը-
կարագրութիւնը։”

Սայիս 6ի երեկոյեան ժամը 9ին քաղաքի մօտ

սպանեց մի թուրք, որի սպանողը թէև անյայտ էր, բայց թուրքերը այդ սպանութիւնը վերադրելով հայրին, Մայիսի 7ի առաւօտեան ժամը 6ին սպանեցին մի հայի: Սպանողը թէև յայտնի էր մի քանի անցորդերի վկայութեամբ, սակայն ոստիկանութիւնը ոչ միայն չը հետեւց նրան ձերբակալելու, այլ և աշխատեց այդ սպանութեան պատահական գոյն տալ: Բայց հայերը նկատելով թէ այդ սպանութիւնը վազուց կազմակերպւած ծրագրի սկզբնաւորութիւնն էր, ամեն կարելի միջոցներ ձեռք առան մտքերը հանդարտեցնելու համար, սակայն միւնոյն ժամանակ տեսնելով թուրքերի ընդհարման պատրաստ զրութիւնը՝ զգուշութեան համար խանութները փակեցին և սպասում էին, որ կառավարութիւնը հաւանականաբար պատահելիք անհարդութիւնների առաջը կառնե: Այստեղից տրւած հեռագիրների վրայ ամսի 10ին տեղս հասաւ երեանի փոխ-նահանգապետ Պոլկովիկ Տրօյցի, որի անմիջական գործը եղաւ կանչել իր մօտ հայերի ներկայացուցիչներին և խոստանալով նրանց իր պաշտպանութիւնը, համոզեց նրանց որ խանութները բաց անեն: Մեզ համար պարզ էր, թէ ինչ նշանակութիւն ունեին բռնակալ ցարի այդ հաւատարիմ գործակալի կեղծ խոստումները, ուստի ջանացինք թոյլ չտալ հայերին խանութները բաց անելու, մինչև փոխ-նահանգապետը չեր գործադրի մեր առաջարկած պայմանները, որոնցից կախւած էր խաղաղութեան վերականգնումը երկու աղգերի մէջ: Դժբախտութար, հակառակ մեր ջանբերին՝ Մայիսի 11ին մի քանի պարզամիտ վաճառականներ գնացին բազար և հաղեւ թէ խանութները բաց էին արել, թուրքերի հայագին մի խուժան յարձակում են նրանց վրայ և սկսում է աղեխարշ տեսարանը: Կարծ ժամանակաւայ ընթացքում հայերից ըսպանում են 47 անձ, որից հինգը այրւած կրակի մէջ, կոտորածից յետոյ թուրքերը սկսեցին թալանել խանութները և երեկոյեան դէմ արգէն ոչ մի խանութ կամ մագազին չեր մնացել ազատ այդ համարձակ թալանից: Այդ դէպքի ամբողջ ժամանակամիջոցում փոխ-նահանգապետը ոստիկանութեան ամբողջ կազմի հետ (որը կազմւած է մի մի այս թուրքերից) ման էր գալիս բազարում ոչ թէ չարիք առաջն առնելու, այլ չարագործներին խրախուսելու համար:

Թուրքերը այդ օրը քաղաքի մէջ իրենց նպատակը իրագործելուց յետոյ՝ գիշերը գնում են Խամբիլ գիւղը և այնտեղ որի անցկացնելով մի ամբողջ հայ ընտանիք, կողոպտում են նրանց հարստութիւնը:

Երկրորդ օրը Մայիսի 6ին, նրանք սկսեցին յարձակել հայ գիւղերի վրայ և մի քանի օրւայ մէջ թալանեցին բոլոր հայ գիւղերի տաւալն ու ոչխորները: Ճահրի գիւղում սպանեցին 46 հայերի և առեանգեցին հայ աղջիկներին, իսկ 200 տուներ բոլորովին այրեցին: Թըմքուլ գիւղում սպանեցին 23 հայերի և կողոպտեցին նրանց ապրանքները:

Այս բոլոր գաղանային արարմունքներին անտարբերութեամբ ականատես էր լինում քրիստոնէից պաշտպանութիւնը, և երբ խեղճ ու միամիտ հայերից դիմում էին փոխ-նահանգապետի պաշտպանութիւնը կնողելու, սա հեգնութեամբ ցոյց էր տալիս իր ոյժի տկարութիւնը ընդգէմ կատաղած թուրք խուժանին, միջդեռ քաղաքում գտնուող զօրքերը բաւական էին, եթէ սակայն նրանց հրամայւած լինէր ոճրագործներին թոյլ չտալ յարձակում գործելու: Բայց չէ՞ որ այդ միւնոյն չի-օվիիկն էր, որ ուրախ գէմքով բազարի մէջ կանգնած, երախուսում էր չարագործներին և թալանւած ապրանքները փոխադրող բեռնակիրներին ծիծաղդէմ ասում էր, «բաս տի» (բաւական է, բաւական է) . . .

Երկու օր առաջ տեղս հասաւ գեներալ Ալիսանօվ բազմաթիւ զօրքերով: Կա լիազօրութիւն ունի ամեն միջոցներով կարգը վերահաստատելու համար յանցաւորներին պատժելու (.) և հայերի վլասները վերագարձնելու: Բայց ինչ տարօրինակ հակառակութիւնը յայտնի կերպով կոտորած ու թալան է առաջացնում և միւնոյն ժամանակ լրբութեամբ ուղղում է ցոյց տալ թէ միջոցներ է ձեռք առել իր ձեռքով կատարւած չարիքը գարմանելու: Օ՛ ինչ անամօթ հեգնութիւն:

Այստեղ թալանւած, աղքատացած թշւառ հայ ժողովուրդը տակաւին սպասում է բարեխն ամբուակաւին կոտորած թեամբ պատժանութեանը: Ահա՛ թէ ինչումն է մեր ամենամեծ ցաւը: Արդեօք մինչև ե՞րբ հայը չպէտք է համոզէ թէ իր փրկութիւնը միմիայն ինքնապատպանութեան մէջ կարող է գտնել, մինչև ե՞րբ հայ հարուստը շահամլութեամբ կուրացած՝ պիտի զլանալ առաջանական միջոցներ ժողովրդին զինւելու համար և թոյլ տայ, որ բռնակալ ցարի գահիները և սրանց ձեռքում կոյր գործիք դարձած տգէտ ու ֆանատիկ թուրք ամբոխը թալանեն իր հարստութիւնը:

Յեղափոխականները 17 տարուց ի վեր քարոզում են են մեր սորկացած և ամենատարրական ինքնապաշտպանութիւնը կորցրած ժողովրդին այն միակ միջոցը. որով կարելի է գերութեան շղթաները փրշել: Տաճկահայաստանում կատարւած բարբարութիւնները և 300 000 նահատակների տրիւնը բաւական չէր մեզ հասկացնելու ճշմարտութիւնը. Կարմիր Սուլթանի եղանակը խելտար նիկոլոյի գործակալների ձեռքով սարբւած բագւայ աղետալի դէպքն էլ բաւական չեղաւ մեզ քնից զարթեցնելու: Երանի թէ Նախիջևանի ներկայ անդամանելի կորուսը վերջին դասը լինէր կովկասահայերի համար . . .

ԵՐԵՒԱՆ 26 Մայիս, 1905

Արդէն հեռագիրներով տեղեկութիւն տւել եմ ձեզ տեղոյս դրութեան մասին։ Կախիջևանի դէպքերից յետոյ, այստեղ թէ հայ և թէ թուրք ամբոխի զրութիւնը սպասողական էր. բաւական էր մի չնչին առիթ։ Ամսոյս 23ին ժամը մէկեկէսին այդ առիթը տեսց հէնց մի թուրք, որը երեկի դիմամբ, գալով մի հայի գարեջրատուն, քիչ խմելուց յետոյ ըսկըսում է հայոյել. սակայն դիմացիները, խոյս տալու համար կուր առաջացնելուց, ուշադրութիւն չեն ուղղում գարձնել։ Թուրքը դուրս գալով գարեջրատընից լնկելով. հետ միասին, հէնց նոյն գարեջրատան փողոցում, սկսում են պահանջել մի հայ մանկաբարձուհու քրոջից, երեկի մանկաբարձուհու տեղը դնելով որ իրենց հետ գայ իրը թէ հիւանդի մօտ. չնայած որ նրանք սկսում են նոյն իսկ քաշքշել, ի հարկէ, նա չի գնում և մանում է նոյն փողոցում գտնուղ իրենց բնակարանը։ Թուրքերը, դուրս գալով փողոցից, քաղաքային այգու դիմաց դրանցից մէկը մի արձանակ է արձակում, որից յետոյ անմիջապէս ամեղջ խանութները սկսեցին փակել և քաշւել փողոցները։ Այդ միջին, որովհետեւ հայ խանութներից բաւական մաս գտնում են խառն մեծամասնութիւն կազմող թուրքերի մէջ, տեղի է ունենում թուրքերի կողմց հայ յերի վերաբերեալ սպանութիւններ։ Սպանուած են 7 հայ, որից երեքը փողոցում, իսկ չորսը անյայտացած դաբախտան կոչւած մասում, որը գտնում է Զանգի գետի ափին, որ երեկի սպանելուց յետոյ դիմուները ձգել են գետը Վերաբուռում են 17 հայ և միուն 2 թուրք։ Խննութները փակւեցին. մեր կուսողները գրաւեցին իրենց դիրքերը՝ քաղաքում տիրեց խորին լրութիւն մինչև միս օրը (24ին) առուօտեան ժամ տասնեւմէկուկէսը։ Տասնեւմէկուկէսին սկսեց ընդհարումը հէնց ուղղղ պօլիցիայի առջև, քաղաքային այգում։ Արձանակների և մաւզերների հարւածներից գետին ընկան 5 թուրք և ոչ մի հայ. անմիջապէս հրապարակը մաքրեց Շուրքերից հէնց այդ բոպէներին սկսեց սարսափելի հրացանաձգութիւնը զիրքերից, Դիրքերը տեղաւորւած էին բոլոր այն տեղերում, որտեղ հայաբնակ և թրբաբնակ տների սահմաններն են։ Մինչև կէս վերստ դիրքեց հեռաւորութեամբ թուրքը գետին էր գլուխում։ Հայերից սպանուածները շատ հազւագիւտ են, 5-7, մի քանի էլ վիրաւորներ. իսկ թուրքերից բաւական մեծ մաս, որի ձիշտ թիւը անյայտէ, բայց թուրքերը իրենց բոլոր հիւանդներին և ըսպանուածներին ծածկում են, մանաւանդ որ հիւանդանոցը հայկական թաղում է, նրանք ինենց վիրաւորներին չեն կարողանում հիւանդանոց բերել։ Մեր սպասած զէնքերը ստացել էինք հէնց դէպքի առաջին որը առաւօտեան՝ այնպէս որ կարծես թէ հէնց զէնքերին էր սպասուում։ Բոլոր դժւար և կուելու տեղերը ուժեղ կերպով բռնւած էին մերոնցով և ամ-

բողջ քաղաքը տեսնում էր թէ ինչպէս չնչակեան խմբերն էին, որ պաշտպանելով ամբողջ քաղաքը, փառաւոր ջարդ տւեցին թուրքերին. որքան ցաւալի էր տեսարանը, բայց և այնպէս մենք պարզ երեսով կանգնած էինք հայ հասարակութեան առաջ։ Զէնքերի հետ ստացել էինք 166 հատ զանազան տեսակի ատրճանակներ, որ սկսեցինք յուել ժողովրդին, առանց խտրութեան և մեծ մասսմբ Գանձան անհաներին։ Բաւական քանակութեամբ ցրւեցինք նույն փամփուշտ։ Քոլորը մնացել էին զարմացած, թէ չնչ։ Ինչ պահանջութիւնի, որ անթիւ ատրճանակներ և այդքան քանակութեամբ փամփուշտ է ցրւում։ Գործ ենք ածել երկու ուումբ. մէկն էլ Գանձան անձգութիւնը տեսեց մինչև ամսոյս 25-26ի գիշերը, որից յետոյ գաղարէլ է։ Ամբողջ երկու օր շարունակ ամեն մի բոպէում մի քանի տասնեակ գընդակներ էին արձակում։ Ի հարկէ դոցա մեծ մասը անհատակ էր արձակուում, բայց արձակում էր պատասխանելու որ և է կողմից եկած ձայնին, որպէսզի յարձակում ըստ գործիի։ Թալանած են մի քանի թուրք տներ, կողոպտած 4 փոքրիկ հայի խանութներ, որոնք ամբողջովին թուրքերով էին շրջապատւած։ Այլելու անյաջող փորձ արւեց թուրքերի կողմից գէորգեանների մանութակուրալի խանութիւնի վրայ։ Օօրքը ոչինչ չի անում, բացի փողոցները շրջելուց։ Հէնց զինուրների առաջ կատարում է հըրացանաձգութիւնը։

Խանութները երեկի դեռ մի քանի օր ևս փակ կը լինեն։

Մեր զէնք բերող ընկերը, երէկ նորից գնացաւելի մեծ քանակութեամբ բերելու. վողի պակասութիւն ենք զգում։

Մ. ՃԵՆԱՑԻ

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼ Մայիս 30 1905

Կախիջևանի սարսուիները տարածւեցին ամբողջ երեանեան նահանգի վրայ, երեանում հայերը լուգաս տւեցին անմիտ թուրքերին։ Քանի օր է այս վերջինները փակուած են իրենց տներում։ 2-3 օր է Աթարանի և Աշտարակի շրջանն էլ բրդերից ու թիւրքմեններից յարձակման ենթարկեց, սակայն այս տեղ էլ ընդդիմագրութիւնը խրատալից եղաւ։ Երէկ լուր ստացեց, որ զօթուր (Արագածի ստորոտում)՝ գիւղի թուրքերին հայերը սրից անցկացրին։ Գիշերն յուղեց և Ալեքսանլրոազոլի շրջակայ գիւղերից խումբներում գիւղացիկը թափանցին բափանցին բաղաքը ու արտասաւլից աչքերով օգնութիւն էին աղերսում, ասելով թէ 4-500 բոլով աղերսութիւն էին աղերսում, ասելով թէ 4-500 բոլով և բրդեր արդէն հաւաքւած պատրաստում են յարձակում գործել հայ գիւղերի վրայ։ Կոյսպէս յասաւ թէ 70) զինւած մի այլ խումբ ձիւար արդէն արշաւում է քաղաքի վրայ Ժողովուր-

գը իրար անցաւ: Յեղ. կոզմակերպութիւններից մի քանի խմբեր անմիջապէս ճամբայ ելան դէպի ամենից շատ վտանգաւոր գիւղերը: Գաւառապետը հէնց գիշերը, իր հետ առնելով հայ և թուրք մի քանի անձինք, գնացին այդ բոլորը անձամբ ստուգերու և երբ թէ առաջը առնելու: Հրամայւած է դրաձուների 2 գնդերին պատրաստ լինել թուրքերի արշաւան առաջը տանելու(?) :

Ամենից սաստկալին այն է, որ մեր ժողովուրդը շատ քիչ է զինւած, իսկ եղածն էլ կառավարութիւնն է աշխատում իրել: Մի խօսքով՝ եաման դըրութիւն է. կեանքը իր էական արժէքը կորցրել է: Երդիզիք պալատում ծրագրւած պանիսամիզմը կամենում են կովկասում իրագործել. Նախիջևանի խոռվաւթիւնների ժամանակ, թուրքերը պարզելով Ալիի սրբազն գրոշը սրբազն պատերազմի էին հրաւիրում ընդդէմ քրիստոնեաների:

Հ. Ա.

ԲԱԳՈՒ, 29 Մայիս 1905.

Խնչպէս անցեալ նամակով գրել էի, Բագւայ շըջանում Մայիսի մէկը տօնւեցաւ շատ փառաւոր և խաղաղ: Մայիս 2ին աշխատանքը վիրակւեց թէ գործարաններում և թէ նաւթահանքերում, բացի ո՞նօբելի և ո՞ւթակե՞ի նաւթահանքերից (Շիբակ անգլիական ֆիրմա է): Այդ Փիրմաներին հետեցին Միրզայեանի, Բակինսկ. Օբշչեստվօ, Կոկրելի, Կասպեան և մի քանի ուրիշ նաւթահանքերի բանւորները: Վերոիշեալ Փիրմաները այստեղի ամենամեծ Փիրմաներն են և բանւորների մեծամասնութիւնը կազմում են մահմեդականները, գլխաւորապէս Պարսկաստանից են կած թուրքեր, այնպէս որ այս անգամւայ գործադուրը առաջացրին բացառապէս թուրք բանւորները, և որովհետեւ այդ բանւորները չեն պատկանում ոչ մի բանւորական կազմակերպութեան, ուստի և այդ գործադուրը արւեցաւ առանց կազմակերպութիւնների կարծիքը իմանալու և չեր դեկավարում ոչ մի կազմակերպութեան կը զիգ:

Քաէպէտ գործադուր արած բանւորները պահանջներ էին ներկայացնում իրենց տէրերին, բայց այդ պահանջները շատ հակասական էին: Օրինակ, սօրէլի Փիրմայի բանւորները, որոնք վարում են միեւնոյն պաշտօնը, ներկայացրին չորս տեսակ պահանջներ մէկը միւսին հակասող: Ի հարկէ այդ բանը պիտի վերագրել թուրք բանւորների տգիտութեան և բացի այդ Ռ. Ս. Դ. Բ. Կ. շատ թոյլ կերպով է գործում թուրքերի մէջ: Այդ պարտականութիւնը բնականաբար պէտք է կատարեն հայ գիտակից ընկերները, որոնք լինելով տեղացիներ, աւելի լաւ ծանօթ են թուրք լեզուն և նրանց նիստ ու կացին. բայց, գժբախտաբար, շնորհիւ ուսւ լիրը կառավարութեան, այդ երկու հարեւան ազգերի մէջ յարակերպութիւնը այնպէս լարած է, որ

շատ կասկածանքով են վերաբերում իրար: Խնչպէս վերը ասացի՞ թէ այս գործադուրը մասնաւոր ըընաւորութիւն էր կրում, բայց և այնպէս օրէցօր մեծ ծաւալ էր ստանում, այնպէս որ Մայիս 10ին նաւթահանքերից շատերը կանգնած էին: Ռ. Ս.-Դ. Բ. Կ. տեղւոյս փոքրամասնութիւնը, տեսնելով որ Բարձիսանի բանւորների մեծամասնութիւնը գործադուր է արել, Մայիս 10ին կէսօրից յետոյ յայտաբարեց ընդհանուր գործադուր, (մինչև Մայիս 10 գործադուրը տեղի ունէր միմիայն Բալախանում, իսկ Սև քաղաքում և Բիբի-Ճելբաթում, որտեղ բան որների մեծ մասը քրիստոնեաները են կազմում, աշխատում էին), բաց թողին մի ընդարձակ թռուցիկ, որտեղ գրւած պահանջների մեծ մասը քաղաքական էր և բաժանւած էր երեք մասի. բանւորներին, գիւղացիներին և զինւորներին: Կապիտալիստները, տեսնելով այս քրօնիկական գործադուրներից առաջացած աչագին վնասները, և որ իրենք ամեննին իրաւունք չունեն բանակցելու բանւորների հետ, ինչպէս Ապրիլ 30ին, այս անգամ էլ հեռագրով գիւղցին մինիստրութեան, ինդընելով որ բանւորներին տրեի հաւաքումների, խօսքի, կազմակերպւելու և գործադուրների ազատութիւն, որպէսզի բանւորները հնարաւորութիւն ունենան ազատ կերպով մըշակել իրենց պահանջները և որ ամենագլխաւորն է, իրենք՝ կապիտալիստները՝ հնարաւորութիւն ունենան ազատ կերպով բանակցելու մի բանւորական կազմակերպւած մարմնի հետ, այլ ոչ թէ ստիպւած լինեն գիւղել սատիկանական օգնութեան, որը միշտ աւելի է բարդում գործը ու մեծ վնասներ տալիս արդիւնաբերութեանը:

Աս թարգիւնաբերողներից շատերը, գլխաւորապէս մեծ ֆիրմաները, խօսում էին, որ եթէ այս անգամ էլ մինիստրութիւնից մերժում ստանան, ֆիրմաները իրենք պիտի գործադուր անեն, դադարեցնելով նաւթի արդիւնաբերութիւնը առնւազն 3 ամսով մինչեւ որ իրերի գրութիւնը պարզէ:

Կառավարութիւնը, տեսնելով որ եթէ կապիտալիստների այդ մտադրութիւնը գործադրւի, աչագին հարւած տւած կը լինեն ամբողջ Ռուսաստանի արդիւնաբերութեան, այնպէս որ համարեա թէ կեանքը կը գագարի Ռուսաստանում, ոյն էլ մի այնպիսի կրիստիկական բոպէում, ոլին բնականաբար կը հետեւ ընդհանուր յեղափոխութիւն, առանց երկար մտածելու, որոցց մի անհաւատալի, խայտառակ ու միանգամայն վտանգաւոր միջոցի գիւղը այն է՝ Բագւայ (եթէ չասեմ ամբողջ Կովկասի) շըշտնի կ առ ա վ ա ր ո ւ թ ի ւ ն ը ժ ա մ ա ն ա կ տ ւ ո ր ա պ է ս (): յ ա ն ձ ն ե լ թ ո ւ ր բ ե ր ի ն, ի ր ե ն վ ե ր ա պ ա հ ե լ ո վ ա ն ւ ա ն ա կ ա ն ի շ ի ւ ա ն ո ւ թ ի ւ ն ը մ ի ա յ ն:

Պատմական այդ նշանաւոր փաստը կատարւեցաւ Մայիս 14ին Կիկոլա ցարի թագաղըրութեան ժք. տարեգար ձի օրը: Կաշանաւոր օր. այդ փաստը բաւական է ապացուցանելու, որ նեխուած ցարիզը իր հսկեարքի վերջին վայր-

կեաններում է, որ նա՝ այդ ապուշը, այլ ևս ոյժ չունենա-
լով ձնշելու բանւորական շարժումը, իր այդ ձիւա-
զային վարմունքով վերջնականապէս իր անզօրութիւնն
ու անկարողութիւնն է ցոյց տալիս։ Եւ յիրաւի, որպիսի
ստորնութիւն, ամենակարող ցարը, գարերից ի վեր իր
կրնկի տակ միլիօնաւոր ժողովրդներին ճգփող այդ գա-
զանը, այսօր այն աստիճանի է հասել, որ բանւորական
շարժումները խեղդելու համար ինըը անզօր է գտնը-
ւում և թուրք ամբոխին է յանձնում այդ ստոր-
նացուցիչ դերը։ Թուրքերն ել, ի հարիէ, սիրով
ընդունեցին մեռնող ցարիզմի այդ խեղդիրը։

Այսին 14ին յանկարծ լուր տարածւեցաւ, որ հրապարակային ժողովը է նշոնակւած, որին անհամբերութեամբ սպասում էին բանւորները Ամենքը շոտպեցին ժողովատեղին, մտածելով որ հաւաքման ազատութիւնն էլ ձեռք բերին, բայց ի զարմանս ամենքի, յանկարծ յայտարարւեց, որ ժողովին կարող են մասնակցել թուրք բանւորները միայն, իսկ բոլոր օտարազգի բանւորներին մուտքը խստիւ արգելված է: Իսկոյն բոլորը զգացին մի տեսակ սարսուռ և իմացան որ ինչ որ մի մութ գործ է կատարում: Այդ օրը Բալախանի եկան բագւայ շրջանին որի շխան երը, այն է՝ մի բանի հարուստ թուրքերը. Հաջիկ, Հաջինսկի, Աշուրով, Սովոր Ալին, Բագրի Քաղաքացլուխ Մուխտարօվ, Ասադուլլակ, Մուսա Նագիև և գաւառական ղազին: Ահա սոքա են մեր նոր ցարիկները, և զրանք էին հրաւիրել այդ հապարակային ժողովը: Ժողովին ներկայ էր և ցար Նիկոլայի ներկայացուցիչը, Բալախանիի ոստիկանապետը 20 կօգակով: Կօգակները հսկում էին որ ժողովին օտարազգիներից չըգան, որովհետեւ նոր կառավարութեան միջիցիան դեռ չէր կազմւած: Հաւաքւած էին 2500-3000 թուրք բանւորները, հրաւիրած էին և շրջակայ թուրք գիւղերի տանուտէրներին և պատւառոր գիւղացիներին: Այստեղ աւելորդ չեմ համարում ասել, որ մեր ընկերներից մեկին յաջողւեցած պատեալ կերպով ներկայ լինել ժողովին: Այդ բանին օգնեցին մի քանի ծանօթ թուրքերը ժողովը բացեց Աշուրօվը: Նա դարձաւ թուրք բանւորներին, ուղղելով նրանց մի շարք սարսափելի հայհոյանքներ, ըսկամած իթ օղլու ից, քեզ օփագ օղլու իշմինչև ամենածայրայեղ հայհոյանքը: Այդ տգէտ բանւորները, առանց ձեն-ձպտուն հանելու, կուլ տւի այդ հայհոյանքները: Հայհոյանքից յետոյ դարձաւ թե նձեզ նման ախմախ չների պատճառով մեզ յանդի մանում են մեր թագաւորն ու սարդարը (նոր փախարքան), ասելով, որ այս ինչ է, դո՞ւք էլ սկսել բունթեր անել. իսկ ախմախի նման, առանց մեզ ասելու, խելքներդ տւել էք ախմախ հայերին և պիանից (հարբեցող) ոռւսներին, կարծէք թէ մենք մեռել ենք:” Ապա հարց տւեց թէ ինչո՞ւ չեն աշխատում. “Պարսկաստանից եկել էք աստեղ փող աշխատելու, թէ բունթեր անելու, և մեր գիւղացիներ

տունը քանդելու. եթէ չեք ցանկանում աշխատել գլ-
նացէք, կորէք ձեր քանդած իրանը՝ թուրք բան-
ուոները սարսափած ու վախեցած այդ հայ հոյանքնե-
րից և սպառնալիքից, միտօնայն ասում են. ոկաշխա-
տենք, ձեզ նման ազաները սազ լինեն ո՞վ է ձեր
խօսքը գետին ձգողը, միտյն թէ վախենում ենք ուս-
ներից և հայերից՝. Այդ հարցին պատասխանում է
Մուխտարովը. ո Դուրք ամենենին մի վախենաք. զնա-
ցէք աշխատելու. եթէ մի ուսւ կամ մի հայ գայ ձեզ
արգելելու՝ տւէք վզակովներին և վոնդեցէք՝. Յե-
տոյ Մուխտարովի ծառայողներից մէկը, Զէնտրովը լս-
կըսեց թւել թուրք բանւորների պահանջները, որոնց
մէջ ոչ մի տնտեսական ու քաղաքական պահանջ չը-
կար. 1) Բալախանիում Շինել շիայ և Սունի աղանդին
պատկանողների համար երկու մլիկիթ. 2) շինել բա-
ղանիսներ թուրք բանւորների համար. 3) տեղական
հիւանդանոցում պահէել թուրք բժիշկ. 4) թուրքերին
յատկացնել առանձին գետին գերեզմանատան համար.
5) պահէել թուրք մօլաներ, որ բանւորների հոգևոր
պէտքերը հոգալուց յետոյ, բանւորներին գրել կար-
դալ սովորեցնեն: 6) Կաւեմահանքատէրերը պարտաւոր
են պահէել թուրք գործակատարներ: Ապա թուրք լա-
զին բանւորներին յորդորեց, որ խելօք լինեն, մեծե-
րին հնագանդեն, եթէ պահանջներ ունեն՝ կարող են
պահանջել, առանց գործը դադարեցնելու, և վելջում
աւելացրեց որ ինքը կը դիմէ նահանգապետին, որ
թուրք բանւորների օրինական պահանջներին կարծ ժա-
մանակամիջոցում գոհացում տրւի:

Ամբիոն է բարձրանում ինտէլիկէնտ Հաջինս-
կին, Բագւայ քաղաքաբային ձայնաւոր: Ոէ՛յ, համշարի-
ներ, ինչ էք ուզում, ինչո՞ւ բուեթեր էք առում,
չէք յիշում որ մի քանի տարի առաջ ստանում էիք
12-15 ոռոբլի: իսկ այժմ 20-25 էք ստանում. Էլ
ինչ էք ուզում, մեզ չետ խօ՞մ եղբայրանալու չէք-
այ, ասում եմ ձեզ, եթէ վաղանից չէք գնալ դոր-
ծի, իմացած լինէք, որ բոլորիդ էլ ծեծելով պիտի
մանենք Բագւայ շրջանից[“]:

Այս օրը Մայիս 15ին եռ կառավարութեան միջիան կազմւած թուրքերից, սպառագիւնած հրացաններով ու ատրճանակներով, բաժանւած մի քանի խմբերի, իրաքանչիւր խումբը 30-50 հոգուց բաղկացած, 5-10 կօղակների աջակցութեամբ շրջում էին բոլոր նաւթահանքերը և ստիպում էին որ երկու ժամայ ընթացքում աշխատանքը վերսկսեն, հակառակ դեպքում բանները բուրդ կը լինի: Բոլոր թուրքերը, տեսնելով որ ամենաչնչին ընդդիմութեւնը կարող է նոր կոտորած առաջացնել, աշխատանքը վերսկսեցին. իսկ 15ին կիւրակի լինելով՝ արհեստանոցներում աշխատանքը վերսկսեց 16ին:

Ահա թէ ցարը ի՞նչպէս ձնշեց բանւորական շարժումը բանւորների ձեռքով. իսկ թուրք ինտէլիգէնցիան, եթէ միայն ինտէլիգէնտ անունը կարելի է տալ

այդպիսիներին, ցարի ձեռքին խաղալիկ դարձած՝ թուրք ժողովրդին արջի ծառայութիւն է անում:

Մ. ՄԱՆԻԿԵԱՆ

Յ. Գ. Այժմ կովկասի զանազան հայաբնակ կէտերում հայերի կոտորածներ է տեղի ունենում թուրքերի ձեռքով, այդ բանը ակներև կերպով առաջ է տանում կառավարութիւնը: Հին նախիջևանում և շրջակայ 20 գիւղերում տեղի են ունեցել Մայիս 9—17 սորսափելի բարբարոսութիւններ, հըրդեհւել են գիւղեր, կողոպտել են եկեղեցիներ. բացի այդ, բոնի կերպով ստիպել են հայերին մի քանի տեղ մահմեդականութիւն ընդունել: Այժմ խլոտում կայ գողթանի շրջանում. Մայիս 23—28ին նոյնանըման բարբարոսութիւններ են տեղի ունենում երեանում և շրջականերում: Օրէցօր կոտորածը սպառում է բնագւում, գանձակում, ջուշեում, ջանգեազուրում և ուրիշ շատ տեղերում: Այսօր լուր հասաւ, իբր թէ Շամախում կոտորածը սկսւած է: Իսկ նոր փոխարքան ձեռքերը ծալած նստած է առանց մի կտրուկ միջոց ձեռք առնելու:

Ղթէ արտաքին միջամտութիւն չը լինի, մեծ արիւնչեղութիւններ պիտի լինեն: Յեղափոխական մարմինները շշմած են այս անտակնկալներից և չը գիտեն ինչ անեն. մեծ քանակութեամբ զէնք չկայ. իսկ թուրքերին կառավարութիւնն է բաժանում: Ամեն օր խուզարկում են հայերին և զէնքերն առնում:

Մ. Մ.

ԹԻՖԼԻՍ 2 Յունիս, 1905

Այբողջ կովկասը նորից ալեկոծութեան մէջ է, երեանեան և Ալեքսանդրովօլի գաւառներից սարսափելի տեղեկութիւններ են ստացում. ամեն տեղ ըսպանութիւն, թալան, հրդէն, սով է տիրում, և նայեցէք թէ ինչ են անում մեր փայտէգլուխ բուրժուաները: Դրանցից մի խուժը ընտրել ընտրել երէկ գնացին Վօրօնցով՝ Դաշկովին ներկայանալու: Ինչ էք կարծում, ինչի համար էին գրանք գնացել: Երկրի համար տպահովութիւն խաղաղութիւն պահանջելու: Չոսիազանց սիալում էք: Այդ պարոնները գնացել էին փոխարքայից խն զ ր ե լ ո ւ, որ . . . ե կ ե լ ե ց ա կ ա ն կ ա լ ւ ա ն ե ր ը վ ե ր ա գ ա ր ձ ւ ի ն. Ինչ, զարմանում էք. զարմանում էք որ այսպիսի մի ժամանակ, երբ ամբողջ ջրաղացը ջուրը բշել տարել է, մեր խելօքները ջրաղացքի չափակութիւնն են փնտուում: Այս ողորմելիները գեռ չեն կարողանում հասկանալ, որ վաղուց արդէն անցել են միապետութիւնից շնորք խնդրելու օրերը, որ այդ միապետութիւնը հոգեվարքի մէջ է արդէն և որ նրա շունչը աւանդելուց յետոյ, այլ ևս այսպիսի նոր կարգեր պիտի բերեն ամբողջ երկրում, որ ո՛չ միայն եկեղեցական կալւածները, այլ

և շատ ու շատ ժողովուրդից խլւած բաներ ինքնաբերաբար կը վերադարձեն: Այսպիսի մի ժամանակ, երբ կառավարութիւնը բոլորովին կորցրել է իր ոյժն ու նշանակութիւնը, երբ ամեն բան անւում ու կատարում է հակառակ կառավարութեան թոյլաւութեան ու արգելըների, ասում ենք, այսպիսի մի ժամանակ կավարութիւնից բան խնդրելը, և այն էլ եկեղեցական կալւածների վերադարձումը խնդրելը աւելի բան ապշտութիւն է: Եւ այսպիսի ապաշութիւն կարող են մի միոյն հայ բուրժուաները անել: :

ՔՐԴՈՒ, 10 Մայիս, 1905

ԲՈՂՈՅԻ

Արդէն պարզ ճշմարտութիւն է, որ ցարիզմը գրանըւում է իր անկան նախօրեակում. նոյնչափ և պարզ է, որ այդ անկումը առաջացրեց Ռուսաստանի պրոլետարիատը: Այժմ Ռուսաստանի փոքրի շատէ յալտնի քաղաքներում ու տեղատեղ զիւղերում յեղափոխական շարժումը աշազին ծաւալ է ստացել: օր չէ անցնում, որ հեռագիրը լուրեր չը հաղորդէ զանազան տեղերից նոր ընդհարումների և ցոյցերի մասին. իսկ զործադուները դարձել են ցրօնիկական: Ամեն տեղ ժողովներ է, որ զումարտում են, ծրագիրներ ու պահանջներ է որ մշակում են: Մինխտրական կօժիտէան էլ առաջւան նման անգործ չէ. զիշեր ու ցարեկ ժողովներ է անում. Նիկոլացարի կը զլուիը անցնութիւնից օւուել է, որովհետեւ օրական մի ցանի տասնեակ բէսկրիպտներ և մանիֆլուսներ է ստորադրում. . . Բայց Ռուսաստանի ժողովուրդը ապերախտ է, չի բաւականանում փշրանցներով. նամիշտ շտա է պահանջում . . . մանաւանդ այդ աներես բանւորները . . . գիտես, այլ բոլորի պատճառը անիծեալ հրեաներն ու հայերն են, ասում է ցարը . . . Մամաւին էլ կարծեութէ սիժմ աւելի ազատ է թոթովում: Անգործ չեն և մեր ազգալին լիբէրաները. նոցակ յանուն ազգի զիշեր ցերեկ աշխատում են, ամեն տեղ ներկալանում են որպէս հայ ազգի ներկայացուցիչներ . . . առանց ձայնի . . . ստորագրել են տալիս զանազան խընդրագրեր առանց հարցնելու ստորագրողի կարծիքը. Ալստորագրի պրժաւ զնաց, խօս մենց ազգի թշնամին շենց՝ ներկայանում են ամեն մի զասակարգի առանձին առանձին և սսում են, որ իրենց պաշտպան են նոյն այդ զասակարգի շահերին, մշակում են բազմազոյն, բազմանկին ծրագիրներ ու պահանջներ, ի հարկէ մէկը միւսին հակասող են, միայն շատ զգուշութեամբ որ այդ պահանջներում չը շոշափի են ձայրայեղ քաղաքական ու տնտեսական խնդրեներ, մանաւանդ քաղաքական (նոցացաղացական զործը ուրիշ անդ է. Ռուսաստանում զըրութիւնը այնքան էլ վատ չէ. կարելի է տանել: Է՛հ, եկեղեցական կարուծներն և ուսումնարաններն են. այդ էլ շուտով կը վերադանեն) այդ բոլորը անում

է յանուն հայ ազգի, յանուն ժողովրդի առանց այդ ժողովրդից հարցնելու, թէ ինչ է ցանկանում կամ ինչ պահանջներ ունի . . . Մեր այդ ազգային տիրացուները մի շատ կարևոր բան մասնում են, ինչպէս միշտ էլ յուացած են եղել այն, որ ազգային ժողովուրդ ասել չէ նշանակում մի բանի տաւոնեակ ինժիներներ, առանց հօնորաբի հիւանդին ընդունող բժիշկներ, մի բանի իրենց ինտելիգէնտ համարադ պարոններ, այլ ընդհակառակը այդ դասակարգը եղել է և է բուն ժողովուրդ կազմող դասակարգի թշնամի: Ժողովարդը կազմողը մենց ենց, բանուրներու ու զիւղացիներու, որոնց զուք միշտ էլ յուացած էց եղել և միշտ էլ շահադործել էր յանուն ազգի և առանց զիտակցութիւն մտցնելու բանուրի ու զիւղացու մէջ: Դուք միշտ շարունակ օրօր էց կարգացել բանուրներիս ու զիւղացիներիս հայ ֆէղայու սրխարագործութիւնները ֆանտասիկ զոյներով նկարագրելով, ոգևորել և խարւած վիճակում թողել: Դուք մեզնից հաւաքւած կօպէկներով ազգային թշնամութիւն էց սերմանել: Դուք աշխատել էր, յանուն ազգի, ջլատել բանուրների ոյժը, խանկարելով զործազուներ ու բանուրների միութիւնը: Վերջապէս ձեզ ինժիներներիդ և պոռոտախօս ինտելիգէնտներիդ միջոցով է, որ հայ բուրժուան ճնշում ու ծծում է մեր արեան վաստակը, դուք մի կոյր զործից էր բուրժուայի ձեռքում ու զիմակաւորւած և վըտանգաւոր բարեկամ մեզ բանուրներիս: Դուք միշտ բամբասել էր և բամբասում էր բանուրներիս և զիւղացիներիս այն կուսակցութիւնների մասին, որոնց իսկապէս մեր բարեկամն են եղել և են. այդ ոճրագործութիւնը շարունակել էր տասնեակ տարի, զուք այժմ էլ ազգային ատելութիւն էր սերմանում բանուրներիս մէջ, (վերջապէս կովկասահայն էլ ձեր ցանած ազգային ատելութեան պտուղը ճաշակեց) ասելով, որ զուք հայ էր, սոցիալ-դէմօկրատներին մի հետեւ, անզիտակցարար դէպի ոռուութիւն էր զնում. ձեզ ոռուացնում են ազգի լեզուն մոռանում էր, զուք հայ չէր եալն, և դուք յանուն ազգի խօսում էր մի այնպիսի ժամանակի, երբ մեզ բանուրներիս վրայ (առանց ազգի խարութեան) զըրւած է պատմական մի մեծ դեր:

Ա՞նց բանուրներա ձեզ տրդէն ճանաչել ենց ոյազո փառաց անցաւորիկ և բողոքում ենց, որ դուք յանուն մարգկութեան ախօրւանից զագարած էր մեր բանուրի հաւատարմատարը լինելուց և այսուհետե շհամարձակէր բանուրի անունիդ խօսելու: Դուք զառան մորթով զալլեր էր եղել մտած բանուրն իս փարախը, այսուհեակ մեր բոլոր զիտակից ընկեր բանուրների ոռուր պարտականութիւնը պիտի լինի ձեզ նմաններին հալածել մեր շրջանից:

Աեցցէ Սօցիալ-դէմօկրատիա! Աեցցէ Հնչակեան Ա. Դ. Կ.-Թիւ!

ՀԱՅ ԲԱՆԻՈՐ

ԱՍՏՐԱԽԱՆ ՅՈ ՄԱՐԻԼ, 1905

Միապետութիւնը ցնցւել է: Նա տեսնում է, որ իր գարաւոր շղթան այլ ևս չի կտրողանում իսեղգել արթնացած միտքը. Նա չի կտրողանում աղատութեան և առաջադիմութեան ոգին Ճնշել: Ազատ միտքը, վիրաւորւած ինքնասիրութիւնը այնպէս չեն բարձրացրել իրանց գլուխը, որ ենթարկւեն Ճնշման և վախսենան միապետութիւնից:

Ճնշւած և վախկոտ ոգու խորքից յարութիւն առաւ առողջ հոգին և իրաւ ահեղ գոչը արեց:

Այդ գոչն է՝ ոկազի միապետութիւնը:

Խսկ միապետութիւնը: Նա տեսնում է և ըգուածմ է, որ իր օրերը հաշւած են և ինչ է անում. Ինչ պիտի անէ մեռնողը, ինչ պիտի անէ շունչ փշողը մահւան առաջ: Օրհասական ցնցումներ է անում միապետութիւնը ներկայումս: Նա տեսնում է, որ ամեն կողմից պահանջները սաստկանում են, ամեն կողմից զօրեղ կերպով բողոքներ են արտայատում միապետութեան գէմ: Այնքան պատերազմի գաշտով չետաբրբուում ներկայումս, որքան ներքին կեանքի փոթորկալից պահանջներով: Միապետութիւնն այդ տեսնում է և առաջ է մլում հազար անգամ իր գործադրած փտած օրօրները: Ոչ մի որոշ ծըրագիր, ոչ չի եղանակ, որով յագուրդ տրւէր ժողովադական պահանջներին, մենք չենք տեսնում: Այդպէս, եր նաև մի ժամանակ ֆրանսիայում, երբ միապետութեան վրայ գրոհ էր տալիս յեղափոխութիւնը:

Ի՞նչ կասէց, օրինակ, այդ տեսակ օյինների մասին, որ տեղի ունեցան վերջին մի քանի ամսւայ ընթացքում: Վախսենալով փետրւար 19ի (Ճորտերի աղատութեան տարեդարձի օրը) մի զօրեղ ցոյցից, նախընթաց օրը, այն է՝ փետրւար 18ին միապետութիւնը արձակում է մի մանիփէստ: Այդ մանիփէստով տալիս էր միջոց ազատ կերպով ժողովներ անելու և ընդհանուր կարիքների մասին ձայն բարձրացնելու: Եւ երբ ամեն կողմից, ամեն մի խուլ անկիւններից սկըսեցին պահանջել սահմանադրական ժողովի, ընտրողական իրաւունք, ձայնների ընդհանուրը, հաւատար, ուղղիղ և գաղտնի եղանակով:— միապետութիւնը շշմեց: Ինչպէս — միթէ իսկապէս հասունացել են մեր խուլ անկիւնները, որ բացարձակ պահանջում են կուռափարութիւնից այնպիսի ձեւեր, որից յետոյ միապետութիւնից քարի քարի վրայ չի մնում: Ո՞վ այդ կը սպասէր: Հետեւանքը: Մի քանի ամիս անցած, այն է՝ ապրիլի 14—15-ի թերթերում լոյս է տեսնում ներքին գործոց մինիստրի շըջաբերականը, որով իրեւթէ բացարձարում է փետրւարի 18ի մանիփէստի գործադրութեան եղանակը, իսկ իրօք կէտ առ կէտ նըրան հիմնովին ոչնչացնում: Այդ բացարձարութիւնից յետոյ ոչ ոք չի վատահանալ ժողովներու և ազատ խօսելու, քանի որ այդ իրաւունքը բարձրում է

և նոյն իսկ թոյլ չի տըրւում որոշումները լրագրութեան մէջ տպելու:

Ահա թէ ինչպէս է վերաբերում միապետութիւնը մեր կարիքներին:

Աակայն այդ կարգադրութիւնից յետոյ գալիս է Մայիսի մէկը: Դարձեալ մի ցաւ, գուցէ այդ օրը մի վըտանգ կայ, գուցէ յեղափոխութիւնը իր գուռիւր այդ օրը բարձրացնէ, այն ժամանակ ինչ անել. հակառակի նման էլ այդ տարւայ Մայիսի մէկը նոր տոմարով մեր Զատիկի օրերն էր գալիս, ինչ ասել: կուզէ երկիւղը կրկնապատկւեց: Պէտք էր գարձեալ մի օրօր և այդ էլ եկաւ:

Դա զատկական ո՞րամանն էր, որով կրօնական ազատութիւն էր շնորհւում Ռուսաստանում: Կրօնական ազատութիւն. ինչպէս: Մի քանիսները հակում ունեցան հաւատալու, որ այսուհետեւ կարող է ակամայ ուռւացածը իր ուզած կրօնին դիմել: Բայց ո՞ր խելքը գլխին մարդը հաւատաց այդ բանին: Օրինակը հեռու չէ: Որդայում՝ տեղական ուռւագաւանները (երեխ բոնի ուռւացածները) դիմել են պատօրին և կամք յայտնել լուտերականութիւնը ընդուներու: Պատօրը մերժել է, պատրւակ բերելով, որ նա պէտք է կանխաւ լաւ հաւատիանայ թէ արդեօք ճիշդ իրանց համոզունքով են դաւանափոխ լինում: Պարզ է որ պաստօրը թելալրւած է այդպէս վարւել: Իսկ այսկապէս վէճուստիկ թըշւառ թերթը այդ մասնիքստից յետոյ վայնասուն է բարձրացրել. նա մինչև անգամ լուրջ կերպով երկիւղ է կրում, որ մի գուցէ օտար տարրերը կլանեն օրթօդօքս պրաւուլաւեկեղեցուն: Էլ չեմ ասում, որ նոյն մասնիքստը մի խօսք չի ասում հրէական սահմանափակումների մասին: Մինչ գեռ այդ սահմանափակումները լուրջ կերպով կապւած են հրէական կրօնի հետ: Ահա թէ ինչ տեսակ սկզբանի ազատութիւն է տւած մեզ:

Եւ մեզանում ոչ ոք չէ զարմանում դրա վրա: Ամենքը գիտեն, որ միապետութեան ձեռքով տրւած օրէնքը, խոստումը անում է նրա համար, որ յետոյ գործադրելու ժամանակ առաջ բերեն զանազան արդելքներ և ի հարկէ միապետութեան վայել մութ ձեւերով: Այդպէս էին վարւում նաև մի քանի շաբաթ առաջ այն գէպեռմ, երբ փետր. 18ի մասնիքստի հիման վրայ զժգոհ տարրը ստորագրում էր որոշումներ: Այդպիսիներին ծածուկ կանչում էին կանցելեարիաները և խիստ յանդիմանում, իսկ եթէ աստիճանաւոր կամ ուսուցիչ է, նոյն իսկ տեղից, պաշտօնից զրկում:

Նոյնը կը լինի և այդ կրօնական ազատութեան օրէնքը: Եթէ որ շատ ո՞ի չարն գործադրեն՝ այդ հրամանի իմաստը այն ժամանակ իսօ' հեշտ է նրան ոչնչացնել:

Ոչ! այդ միջոցներն էլ չեն օգնիլ. դրանցով ևս չի աջողութիւն միապետութեան քնացնել զարժնած մտքերը: Մենք կարծում ենք ընդհակառակը, որ

այդ արհեստական քնացումները աւելի կը զարթեցնեն նոյն իսկ այն մտքերը, որոնք գեռ տատանւողների շարքին են պատկանում: դրանք կը հասկանան իմարուսիկ խոստումների իմաստը, վերջնականապէս կանցնեն ծայրայեղ յեղափոխակոնների բանակը — և միապետութիւնը խայտառակ կերպով կը ջախջախւի: Արքան միապետութիւնը հիմնական փոփոխութիւններ մտցնելը դանդաղեցնէ, այնքան աւելի իրան վնաս: Թարմ, ձկուն միտքը աւելի ուժեղ գրոհ կը տայ և վերջնականապէս իր նպատակին կը հասնէ: Եւ այդ միտքն այժմ իսկ չի հաւատում ո՞չ մի խոստմունքի և ո՞չ մի մատիքէստի: Նա գիտէ արանց արժէքը. նա շատ լաւ է հասկանում, որ այդ անում է ժամանակ իմելու նպատակով. սակայն ժամանակ խլելը երկարացնէ սուր է: Նաև՝ միջոց է տալիս ամրանալու հասարակական ուժերին: Իսկ այդ հասարակական ուժերը շատ բան կանցն և ամենից առաջ միապետութեան գուխը վերջնականապէս կը ջախջախնեն: Այդ իմաստը մտիւ է մեր մեջ: Հասարակական ուժերը վերջնականապէս կազմակերպւել են և Աստրախանում: Դրան ապացոյց, որ գաղտնի ժողովները, նաև բացարձակ բողսքները ուղղակի պահանջում են միապետութեան ոնկումը: Յետագայ նամակներով մենք փաստերով կը ներկայացնենք այդ: Այժմ թող շասեն որ, Աստրախանը հեռու է կենդանի կեանքից և եթէ նա մինչև օրա, չէ դուս եկել փողոց, ցոյցեր չէ կաղմել, սակայն իր մեջ շատ է խմուրել. Յեղափոխութեան դրօշը ոնի գրկած և աստրախանցին. նա երբէք զած չի դնել այդ կարմիր գրօշը իր ձեռքից, նա չի խաբւիլ օքորների խոստումներից, և աստրախանցի բանուրը կը հետեւէ Սօցիալ. գէմօկրատիային!

ԺԱՆԻՔ

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

